

Գ.Վ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՄ-/ԱՆ-, ՀԱՄ-/ՀԱՆ- ՀՆՉՅՈՒՆԱԽՄԲԵՐՈՎ ՍԿՍՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Դիտարկվում են հայերենի *ամ-/ան-, համ-/հան-* հնչյունախմբերով սկսվող մի շարք բառեր, որոնք չեն ստուգաբանվում կամ համարվում են օտար փոխառություն: Այս բառերը արդի հայերենում համարվում են պարզ, սակայն նախագրային շրջանում եղել են բարդ բառեր: *Ամ-/ան-, համ-/հան-* հնչյունախմբերը իմաստով կապվում են հայերենի միևնույն արմատից ծագող *ամբողջ, ամէն, համայն, հանուր* բառերի հետ և համարժեքներ ունեն հնդեվրոպական այլ և որոշ ֆիննաուգրական լեզուներում: Ենթադրվում է, որ այս հնչյունախմբերով կազմված վերոնշյալ բառերը բնիկ հայերեն են:

Առանցքային բառեր. *ամ-/ան-, համ-/հան-* հնչյունախմբեր, հնդեվրոպական լեզուներ, ֆիննաուգրական լեզուներ, բնիկ հայերեն բառեր, փոխառություններ:

Հայտնի է, որ հայերենի բառապաշարի մեջ մեծ ծավալ են կազմում անհայտ ծագման բառերը: Հայերենի ստուգաբանության կարևոր խնդիրներից է այդ բառերի կամ արմատների ուսումնասիրությունը: Բառային այդ շերտում մեծ թիվ են կազմում նախագրային շրջանի բարդ կամ ածանցավոր կազմությունները, որոնք արդի հայերենում բաղադրիչների չեն բաժանվում և համարվում են պարզ բառեր: Այդ բառերի քննությունը ցույց է տալիս, որ որոշակի վերլուծություն կատարելով, այնուամենայնիվ, դրանց մի մասը հնարավոր է բաժանել առանձին կազմիչների, իսկ երբեմն նաև պարզել դրանց նախնական իմաստը:

Այսպես, հայերեն *անձրեւ, անտառ, ամբար, ամբարտապետ, հանգանակ, հանդերձ, հանդէս, հանճար* բառերը ակնհայտ բարդ կազմություններ են, սակայն արդի հայերենում դրանք բաղադրիչների չեն բաժանվում, քանի որ այդ բաղադրիչների նախնական իմաստը մթագնած է, և դրանք առանձին անգործածական են:

Ինչպե՞ս պարզել այդ արմատների կորսված իմաստները:

Ուշադրություն են գրավում վերոհիշյալ բառերի առաջին բաղադրիչները՝ *ամ-/ան-, հան-*, որոշ դեպքերում նաև *համ-* (*համբերել, համբառնայ*): Հ. Աճառյանը *ամ-/ան-, հան-* մասնիկները համարում է *համ-* նախամասնիկի ձևափոխությունները: Հայերենում կան այսպիսի նախամասնիկներով սկսվող այլ բառեր, որոնց իմաստը պարզ է կամ հնարավոր է կռահել: Դրանց մի մասը նոր կազմություններ են: Օրինակ, *համամիտ, համանման, համանուն, համաձայն, համընկնել* բառերում *համ* նախամասնիկը նշանակում է «նույն, նման, միևնույն» [1]: *Համատարած, համագումար, համալսարան, համադարման* բառերում *համ-* մասնիկը

նշանակում է «համայն, ամեն կողմ, բոլոր, ամբողջ», *համարձակ, համապայծառ* բառերում՝ «միևնույն, ամբողջովին, բոլորովին, շատ»: Հ. Աճառյանը այս նախամասնիկով կազմված է համարում նաև *համբառնայ, համբարձում, համբերել* բառերը: Միևնույն *համ-* մասնիկի մյուս ձևերն են՝ *ամ-* (*ամբառնայ, ամբարձում*), *ան-* (*անդորր*) [1]:

Հ. Աճառյանն այս մասնիկը փոխառյալ է համարում իրանականից, ուր այն հանդիպում է միևնույն նշանակություններով, ինչ հայերենում հ.պրս. hama-, պրս. ham-, քրդ. hem-, hew-, օս. ām-, ān-, և այլն:

Ցեղակից լեզուների մեջ նույն արմատից են համարվում սանս. samá- «նույն», samám «միասին», հուն. ἄμα «միասին», ὁμοῶς «հարթ, հավասար, նման», ὁμο- «համա-», ὁμοῦ «միասին», լատին. similis «նման», գոթ. sama «նույն», sums «մի, մի ոմն», գերմ. zusammen «միասին» և այլն [1]:

Հ. Աճառյանը իրանյան փոխառություն է համարում նաև *համ-* ձևից բխող *համակ* «բոլոր, բոլորովին, ամբողջ, ամբողջովին» (պիլ. hāmāk «ամբողջ, ամբողջապես, բոլոր») և *համայն* «ամբողջ, բովանդակ, բոլոր» (իրան. hama- «ամբողջ» + *-այն* հայերեն մասնիկը) բառերը:

Անհրաժեշտ է նշել, որ *ամ-/ան-, համ-/հան-* փոփոխականերին զուգահեռ հայերենում ունենք ոչ միայն *համակ* և *համայն* ձևերը, որոնք իրանյան են համարվում, այլև *ամբողջ* և *ամէն* բառերը, որոնք բնիկ հայերեն են: *Ամբողջ* բառը բաղկացած է *ամբ-* և *ողջ* բաղադրիչներից: Հ. Աճառյանը նախաձևը համարում է ambhō «երկակի», կազմված ambh+bhō բառերից, ընդ որում, առաջին բաղադրիչը համեմատում է լատին. amb-igō «վարանել, կասկածել, երկմտել», իսկ երկրորդը գոթ. bai, գերմ. beide, անգլ. both «երկուսն էլ» բառերի հետ:

Ամբողջ բառի հ.-ե. զուգահեռներն են՝ սանս. उभ [ubhā], उभय [ubhāya], «երկուսն էլ», उभ [ubh]/ उभय [ubh] «պահել միասին, ծածկել», उभयतस् [ubhāyatas] «երկու կողմից, երկու կողմում», հուն. αμφι, ἀμφι- «շրջապատել», ἄμπεξ «շրջան, անիվ», լատին. ambo «երկուսն էլ», ambiguus, a, um «երկիմաստ, տատանվող, փոփոխական, անկայուն, երկակի», ambio, ire «շրջանցել», իտալ. ambito «շրջան», ambiente «միջավայր», լատիշ. abi, ap- «շուրջ», abēji «երկուսն էլ», լիտվ. abeji «երկուսն էլ», իսլ. um «շուրջ, մոտ», շվեդ., նորվ. om «շուրջ», հ.անգլ. ymbe «շուրջ, մոտ», ym-/ymb-/ymbe- նախաձանցով՝ ymbfaren «շրջապատել», ymberan «շրջապատել», ymbbeorgian «պաշտպանել», ymbhogian «անհանգստանալ, մտահոգվել», ymbhoga «հոգս, անհանգստություն», ymbgeārwan «հազնել, հազնվել», ռուս. оба «երկուսն էլ», об- «շուրջ» (ննգային հնչյունի անկումով)* [2, էջ 143]:

* Ամբողջ բառի որոշ զուգահեռ ձևեր (լատիշ. abi, ap- «շուրջ», ռուս. оба «երկուսն էլ», об- «շուրջ») թույլ են տալիս այն կապել հայ. *ասի-* ժխտական նախաձանցի հետ:

Ֆիննաուգրական լեզուներում՝ ֆինն. *umpi* «կողպեք, սողնակ» (արմատի նախնական նշանակությունն է՝ ամբողջ, բոլորակ, փակ), *ummistaa* «փակել», *umpeutua* «փակվել, միանալ», *umpinainen* «փակ, խուլ», (*umpikuuro* «բացարձակ խուլ», այսինքն՝ ամբողջովին խուլ), *ympyrä* «շրջան, շրջագիծ», *ympäri* «կապ, շուրջ», էստ. *umb*, *umbes* «գրեթե, շուրջ», *umber* «*մկբ. շուրջը, նխդ. շուրջ*», *umber piirama* «շրջապատել», հունգար. *ép* «ամբողջ», ուղմուրտ. *эмьяны* «բուժել», այսինքն՝ ողջ դարձնել, *эмьян* «բուժում», էրզյան. *омбо* «ուրիշ, մյուս, այլ», մոկչան. *омба* «ուրիշ», *омбоце* «երկրորդ, մյուս» մար. *омбо* «*позырь*», *омдаш* «կուտակվել», *эн* «ամենա-, շատ» [2, էջ 143-144]:

Ֆիննաուգրական լեզուներում կան հետևյալ ձևերը՝ ֆինն. *kumpi* «*հարց. դեր. երկուսից ո՞րը*», *kumpikin* «երկուսն էլ», *kunta* «համայնք», նաև՝ էստ. *kim/p*, -*bu* «կապ, կապոց, խուրձ», *kimps* «հանգույց», *kum/b*, -*ma* «երկուսից որը», *kumbki* «երկուսն էլ», էրզ. *коморо* «մի բուռ, կապ» [3, 4]:

Հայերենի *ամ-/ան-*, *համ-/հան-* ձևերին լատիներենում համապատասխանում են *cum-*, *com-*, *con-* նախածանցները: Արմատի նախնական իմաստն է՝ «ամբողջությամբ, լրիվ, հետ, միասին» [5]: Այդ իմաստը պահպանված է մի շարք հ.-ե. լեզուներում՝ իտալ. *con* (նախդիր), հիռլանդ. *com-/con-* «հետ, միասին» և այլն: Լատիներենում *com-* *con-* ածանցներով ձևերը բազմաթիվ են՝ *conjugatio* «կապ, միացում», *combināre* «կապել, միացնել», *componere* «հավաքել, միացնել, կազմել» (ածանցը ունի նաև *col-/co-* ձևերը): Դրանց նախնական իմաստն է «միասին, ամբողջ» [6]:

Հաշվի առնելով հետնալեզվային պայթականով սկսվող լատիներեն *cum-*, *com-* *con-* ձևերը, ինչպես նաև ֆ.-ու. լեզուների որոշ ձևեր, միևնույն ծագումնաբանական փնջին պետք է դասել նաև հայերեն *խումբ* արմատը, հավանաբար նաև *ակումբ, գում* «խումբ», բրբռ. *քոմել* «հավաքել» բառերը: Լատիներեն *cum-* նախածանցը՝ իբրև արմատ, պահպանված է *cumulus* «կույտ», *accumulare* «կուտակել» ձևերում [5, 6]:

Հայերեն *ամէն* բառի նախածնը Հ. Աճառյանը համարում է հ.-ե. **smmo-*: Որպես զուգահեռ ձևեր նշվում են՝ սանս. *सम* [*sama*] «յուրաքանչյուր ոք», հայրս. *hama* «ամբողջ, նույն», պիլ. *hamāk*, քրդ. *hem*, ինչպես նաև հայ. *համակ, համայն* «բոլոր, ամբողջ» իբրև իրանական փոխառություններ: Նշվում է նաև հուն. *άμο, άμα* «միասին», գոթ. *sums*, հբզ. *sum*, հիսլ. *sumr* «ոմն, ոք»: Բուն արմատը համարվում է հ.-ե. *sem* «մեկ», որ հետո դարձել է «բոլոր, ամբողջ»:

Մեր բացահայտած զուգահեռ ձևերն են՝ հ.-ե.՝ լատին. *omnis*, գերմ. *gemein* «ընդհանուր», *Gemeine* «համայնք», չ. *emæne* «ընդհանուր», իսլ. *geimur* «երկնային տարածություն, մեծ տարածություն», յաֆռ. «հավասար, միանման», շվեդ.

jāmn «հավասար, հարթ», նորվեգ. jevn, բրբռ. jāmn «հարթ, հավասար», հ.անգլ. samnian «հավաքել, միավորել», samnung հավաք, խորհուրդ», հ.անգլ. efne, efen (æfen, efn, emn), ն.անգլ. even «հավասար, համաչափ», խեթ. išh ai- «կապել, փաթաթել», išh iman-/išh imen- «կապ, պարան, սանձ, փոկ», išh amin- «լար, պարան», նաև հ ȳmant/ հ ȳmanza «ամբողջ, բոլոր, ամեն», հ amank- «կապել, նշանել», հ ȳppa «կույտ»* [2, էջ 144]:

Հ. Աճառյանը գտնում է, որ *համ-*, *հան-* նախամասնիկները փոխառյալ են, սակայն *ամ-*, *ան-* ձևերը և նրանցով կազմված բառերի հարցը պարզ չէ: Որոշ բառեր, օրինակ՝ *անձրեւ*, *անտառ*, ստուգաբանություն չունեն: Առավել հավանական է, որ *ամ-*, *ան-* ձևերը ավելի հին *համ-*, *հան-* մասնիկների փոփոխված /կրճատ/ տարբերակներն են: Վերոհիշյալ բոլոր ձևերին ծագումով համարժեք են *ամբողջ*, *ամեն*, *համայն*, *հանուր* բառերը, և հենց այս իմաստները պետք է փնտրել *ամ-*, *ան-*, *համ-*, *հան-* նախամասնիկներով սկսվող բառերի մեջ: Այդ իմաստներն ունեն իրենց համարժեք նախամասնիկները նաև այլ լեզուներում՝ լատին. concordia «համաձայնություն», cōnsēnsus «համաձայնություն, միասնություն» cōnstēllatio «համաստեղություն», cōnsanguineus «արյունակից» [5]: Սանսկրիտում համապատասխան *सं* [sa-], *सं* [saṁ-], *सं* [saṅ-] «միասին, հետ» մասնիկներով կազմված են *संगम्* [saṅgam] «հանդիպել, միանալ», *संयुग* [saṅyuga] «միավորում, միություն», նաև *संवर* [saṁvar], «փակել, պարուրել», *संवर* [saṁvara] «պատվար, ամբարտակ», *संवर* [saṁvarṣ] «անձրևել» բառերը: Այս նախամասնիկները երբեմն բառին հաղորդում են սաստկական իմաստ [7]:

Հայերեն *համերգ* (բոլոր երգերը, շատ երգեր), *համատարած* (ամենուր տարածվող), *համաձուլվածք* (մի քանի կամ շատ նյութերի ձուլվածք), *համաճարակ* (ամեն ինչ ճարակող, ամենուր տարածված), *համաշխարհային* (ողջ աշխարհում տարածված, ողջ աշխարհին վերաբերող) և այլ նման բառեր ևս կարող են ծառայել իբրև բանալի՝ իմաստով մթագնած բառերի ստուգաբանության համար:

Դիտարկենք հայերեն խնդրո առարկա բառերից մի քանիսը:

1. **Անձրեւ** - չստուգաբանված բառ է: Ենթադրում ենք, որ բաղկացած է *ան-* նախամասնիկից, որը նշանակում է «ամբողջ» + *-ձր-* + *եւ*: Բառի հնագույն արմատն է *-ձր-*, որի իմաստը պետք է որ լինի «ջուր»: Կարելի է համեմատել լատիշ. dzert «խմել», dzēriens «ըմպելիք» բառերի հետ: Վերջին *-եւ* մասնիկով կազմված են հայերեն *արեւ*, *բարեւ*, *տերեւ*, *պարզեւ*, *կեղեւ* բառերը: Ենթադրելի է, թե նշանակում է «ողջ ջուրը մեկ տեղում, համատարած ջուր»:

* Գ. Ղափանցյանը նշել է m>mm>mb հնչյունափոխությունը խեթերենում, ինչպես նաև հայերենում *թմբրեւ*, *համբրեւ*:

2. **Անփառ** - չստուգաբանված բառ է: Պետք է, որ *ծառ* բառի հետ կապ ունենա: Կարծում ենք, *ծառ* բառի հետ կապ ունեն հայ. *փարգալ* «գդալ», *փոռն* «սանդի կոթ» արմատները: Ըստ ՀԱԲ-ի՝ դրանց զուգահեռ ձևերն են՝ սանս. *dárvi-*, *darví-*, *darvá-* «գդալ», որոնք ծագում են հ.-ե. *derevo-* «ծառ, փայտ» բառից: Սրանց զուգահեռ ձևերն են սանս. *dāru*, հայրս. *dār*, հուն. *δόρυ*, գոթ. *triu*, հւլավ. *drevo*, ռուս. *дерево* «ծառ»: Աճառյանը նաև նշում է, որ շատ լեզուներում միևնույն արմատից ծագող բառեր կան՝ փայտից շինված զանազան իրեր նշելու համար, ինչպես հայերեն *փարգալ*, քանի որ հնում գդալը, տաշտը, դոյլը և այլ իրեր փայտից էին պատրաստվում: Սակայն հայերեն *ծառը* չի նշվում իբրև այս արմատին ցեղակից բառ, ինչպես նաև *փերեւը*: *Տերեւը* միակ հայերեն բառը չէ, որը, ունենալով բավական համոզիչ զուգահեռներ սեմական լեզուներում, ունի ոչ պակաս համոզիչ զուգահեռ ձևեր հ.-ե. լեզուներում: Այն մոտ է ռուս. *дерево*, *дерево*, բրետոն. *derv-enn* ձևերին և, անշուշտ, ծագումնաբանական կապ ունի նրանց հետ

Ծառ արմատի նախաձևն է համարվում հ.-ե. **gʷr so-*, որի *gʷers* տարբերակը նշանակում է «ղլորել, ճկուն ճյուղերից բան հյուսել»: Թերևս ամենաչափազորված ստուգաբանություններից մեկն է: Նշված հ.-ե. լեզուների օրինակները այնքան էլ համոզիչ չեն (հուն. *γερρον* «ուռից հյուսած ցանկապատ, սլաք», նորվ. *kjarr*, *kjerr* «ծառերի և թփերի ճյուղեր, տերևներ», և այլն): Մինչդեռ հ.-ե. լեզուներում բազմաթիվ են հենց «ծառ» նշանակությամբ օրինակներ, որոնք սկսվում են ատամնային բաղաձայնով: Օրինակ՝ սանս. *तरु* [*taru*] «ծառ», *तृण* [*tr̥ ṇ a*] «խոտ, շիվ, ծղոտ», *दारु* [*dāru*] «ծառ, փայտանյութ», *द्रु* [*dru*] «1.ծառ», *तरुण* [*taruṇ a*] «3.ընձյուղ, շիվ», *दार्व* [*dārva*] «փայտե», *दर्भ* [*darbhá*] «խոտ, խոտի փունջ», *द्रुम* [*druma*] «ծառ» (թառմա՞), հուն. *δόρυ* «ծառ», լատին. *dūrius* «փայտե, *հուն. փոխ.*», անգլ. *tree*, ռուս. *дерево*, *дерево*, խեթ. *tāru-* «անտառ, փայտ, ծառ», ավրան. *dru* «ծառ», շվեդ. *trä*, նորվ. *tre* (հոգն. *trär*) «ծառ», լատիշ. *zars* «ճյուղ»: Կելտական լեզուներում՝ իռլ. *dair*, *daur*, բրետոն. *derv-enn*, հ.բրետոն. *daeru*, միջին բրետոն. *deru*, *derv*, հին կորն. *dar*, միջին վալլ. *derven*, բոլորը «կաղնի» նշանակությամբ:

Հ. Մարտիրոսյանը նշում է, որ *անփառ* բառի –*փառ* բաղադրիչը հաճախ համեմատվել է հ.-ե. **doru* «փայտ, ծառ», բառի հետ: Միևնույն ժամանակ ծագումը համարել է անհայտ [8]:

Այն, որ հայերեն *անփառ*, *փարգալ*, *փերեւ* բառերը *ծառ* բառի հետ նույն արմատն ունեն, վկայում են նաև տ-ծ անցումները հայերենում և այլ հ.-ե. Լեզուներում (հմմտ. հայ. *փափանել/ծածանել*, հայ. *ծով* – սանս. *तविष* [*taviṣa*] «ծով, երկինք», հունգ. *tavi* «լճի, լճային», հայ. *ծոռ* – լատին. *torqueo*, *ēre* «շրջել, պտտել,

ոլորել», իտալ. tornare «շրջվել», նորվ. tverr «թեք», անգլ. turn «շրջել, շրջվել»): Ֆիննաուգրական լեզուներում գտնում ենք հունգ. szar «ճյուղ», ռուս. тэлъ «անտառ», էրզ. тарад «ճյուղ», тарадт «ցախ» ձևերը:

Ան- նախամասնիկի «ամբողջ, բոլոր, բոլորը միասին, շատ» իմաստից ելնելով՝ պետք է ենթադրել, որ *անտառ* նշանակում է «շատ ծառեր, բոլոր ծառերը միասին վերցրած»:

3. Հանգանակ – «ընկերովի հավաքած գումար» - Պետք է ենթադրել, որ հանգանակ նշանակում է «մեկ տեղում հավաքած գումար, քանակ»: Տվյալ դեպքում *ն*-ից հետո պայթականը ձայնեղացել է (*հան* + *քանակ*):

Քան /*քանակ, քանի*/ - բնիկ հայերեն բառ է, նախածնը համարվում է հ.-ե. լատին. quam «քան, ինչքան» quantus, quanto «որքան», quando «երբ», ումբր. գոթ. hvan «երբ, ինչպես» [1]:

Այս արմատին ցեղակից պետք է համարել նաև սանս. गणन [gaṇana] «հաշիվ, թվարկում», गण [gaṇ] «հաշվել, գումարել», गण [gaṇá] «հավաք, ժողով, միավորում, միություն», गणक [gaṇaka] «մաթեմատիկոս, աստղագետ»: Թերևս, ավելորդ է հիշատակել նաև հունգար. hany «քանի» բառը [2, էջ 216]:

4. Հանդերձ – Արմատն է *դերձ, դերձակ* բառի արմատն է: Իրանական լեզուներում կան պիլ. darzik, պրս. darzi, քրդ. derzi, terzi, darzi «դերձակ», որոնցից փոխառյալ են ասոր. darziqā և թրք. derzi «դերձակ», նաև պրս. darz, darza «կար», darzan «ասեղ», ou. dares «զգեստ» [1]: Այս վերջին ձևի հետ, թերևս, ծագումով նույնն են անգլ. dress, հայ. *դարձագ*, որն Աճառյանը փոխառություն է համարում պահլավերեն *tarāz չավանդված ձևից: Միևնույն արմատն է *դերձան* «կարելու թել» բառում, և նույն արմատի տարբերակն է *դարձ* «դառնալ, պտույտ», որ ցույց է տալիս, թե թելը պտտելով էին մանում: *Հանդերձ* նշանակում է «ամբողջ հագուստը, հանդերձանքը միասին»: Հ. Աճառյանը նշում է, որ *դերձակ* բառը բնիկ հայերեն է: Ուստի *հանդերձ* ևս բնիկ հայերեն կազմություն է:

5. Հանդէս «իրապարակային քննություն, դատ, տեսարան, հրապարակ, մրցարան» – Աճառյանը համարել է իրանական փոխառություն, թեպետ իրանական ձևը ավանդված չէ: Իբրև ապացույց ներկայացվում են սանս. saṃdēṣa «պատվեր, հանձնարարություն» և զենդ. handaesayaṅsha «ուսուցանել» ձևերը: Սակայն որևէ կապ չկա *հանդէս* բառի նշանակության հետ: Աճառյանը գտնում է, որ համապատասխան իրանյան dis արմատն է «ցույց տալ, սովորեցնել», որն էլ մեզ հուշում է, որ սա հայերեն *տես* արմատն է՝ *հանդէս* բառում *ն* ոնգայինի պատճառով ձայնեղացած: Ենթադրելի է, որ *հանդէս* բառի իմաստն է «ամբողջական տեսարան,

ողջ տեսարանը միասին, այսինքն՝ հանդիսություն»: Ամենայն հավանականությամբ, հայերեն կազմություն է:

Այսպիսով, հայերեն *անձրեւ*, *անտառ*, *հանգանակ*, *հանդերձ*, *հանդես*, ինչպես նաև *ամբառնալ/համբառնալ*, *ամբարձում/համբարձում*, *համբերել* բառերում առկա են միևնույն նախամասնիկի *ամ-/ան-*, *համ-/հան-* ձևերը, որոնց նախնական իմաստն է «ամբողջ, բոլոր, միասին, հավասար»: Առավել հին իմաստներն են «բոլորակ, շուրջ, շրջան, պտույտ», որից էլ ծագել են «անիվ, շրջապատել, փակել, ամբողջացնել, կապել» իմաստները: Հաշվի առնելով *ամ-/ան-*, *համ-/հան-* ձևերով կազմված հայերեն բառերի մեծ թիվը և լայն գործածությունը, ենթադրում ենք, որ *անձրեւ*, *անտառ*, *հանգանակ*, *հանդերձ*, *հանդես* բառերը բնիկ հայերեն կազմություններ են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հհ. 1-4, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1971-1979.
2. **Նիկողոսյան Գ.**, Հայ-ֆիննաուգրական լեզվական առնչություններ, թեկնածուականատենախոսություն, Երևան, 2011, էջ 70-77:
3. Финско-русский словарь (Suomalais – venäläinen sanakirja). /В. Олыккайнен/. - М.: Изд. “Русский язык”, 1975.- 815с. (82000).
4. Эстонско-русский словарь. - Таллин, 1997. - Т. 1, А-Ж. - 981с.
5. Etymological Dictionary of Latin and the other Italic languages, by Michiel de Vaan /Leiden Indo-European Etymological Dictionary Series, edited by Alexander Lubotsky, Vol. 7/, Leiden-Boston, 2008.
6. **Дворецкий И.Х.** Латинско-русский словарь. - М.: Изд. “Русский язык”, 1976. - 1096с. (50000).
7. **Кочергина В.А.** Санскритско-русский словарь [संस्कृत-रूषी शब्दकोश:]. – М.: Изд. “Русский язык”, 1987. - 973с. (30000).
8. Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon by **Hrach K. Martirosyan** (Leiden Indo-European Etymological Dictionary Series, edited by Alexander Lubotsky).

Գ.Վ. НИКОГОСЯН

ЭТИМОЛОГИЯ НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ СЛОВ С НАЧАЛЬНЫМИ ЗВУКОСОЧЕТАНИЯМИ *ամ-/ան-*, *համ-/հան-*

Рассматриваются некоторые слова в армянском языке с начальными звукосочетаниями *ամ-/ան-*, *համ-/հան*, которые либо не имеют этимологии, либо считаются заимствованиями. В современном армянском языке эти слова считаются простыми, однако в дописьменном периоде они были сложными. Звукосочетания *ամ-/ան-*, *համ-*

/hau/ семантически связаны с армянскими словами *ամբողջ*, *ամէն*, *համայն*, *հանուր*, которые происходят от одного корня и имеют параллели в других индоевропейских и некоторых финно-угорских языках. Предполагаем, что рассматриваемые слова исконно армянские.

Ключевые слова: звукосочетания *ամ-/ան-*, *համ-/հան-*, индоевропейские языки, финно-угорские языки, исконно армянские слова, заимствования.

G.V. NIKOGHOSYAN

ETYMOLOGY OF SOME ARMENIAN WORDS BEGINNING WITH THE LETTER COMBINATIONS *ամ-/ան-*, *համ-/հան-*

In this article, several Armenian words with initial sound combinations *ամ-/ան-*, *համ-/հան* are analyzed. Some of these words have no etymology, others are considered to be foreign borrowings: In modern Armenian they are simple words, but in the pre-written period of the language they were compounds. The sound combinations *ամ-/ան-*, *համ-/հան* are semantically connected with Armenian words *ամբողջ*, *ամէն*, *համայն*, *հանուր*, all of which are of the same origin and have cognate forms in other Indo-European and some Fenno-Ugric languages. It is supposed that the words analyzed in the article are native Armenian words.

Keywords: sound combinations *ամ-/ան-*, *համ-/հան*, Indo-European languages, Fenno-Ugric languages, native Armenian words, foreign borrowings.

ՀՏԴ 81'282.4: 821.19

Հ.Պ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ, Ն.Բ. ԳԱԼՍՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐՄԱՏՆԵՐ

Քննվում է ազգային ինքնության թեման ամերիկահայ անգլիագիր գրող Դայանա Տեր-Հովհաննիսյանի պոեզիայում, բացահայտվում և լուսաբանվում հեղինակի ստեղծագործական ներքին շերտերում ձևավորված առաջադրույթները, ամերիկահայության բարոյաբանական տազնապները, ազգային հոգեբանությամբ ներծծված հայոց դիմադրական ոգին: Փորձ է արվել մատնանշելու գրողի տեղը ամերիկյան գրականությունում, նրա ունեցած դերը ազգապահպանության մեջ, քաղաքացիական և հայրենասիրական ընդգծված նկրտումները:

Առանցքային բառեր. ազգային ինքնություն, դիմակայություն, ընտանեկան պատում, սերունդ, հայրենիք, կարոտ, օտար եզերք:

Ներածություն: Հայ-ամերիկյան անգլիագիր գրողների նման Դայանա Տեր-Հովհաննիսյանին մտահոգել է աշխարհասփյուռ հայության վաղվա օրը: Իր չափածո ստեղծագործություններով փորձել է հային հայ պահել օտար ափերում,